

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11  
վիճակագրության պետական խորհրդի նիստի

26.08.2020թ.

ժ.11:00

**Մասնակցում էին՝** Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ն.Բաղդասարյան, Վ.Դավթյան, Ա.Սաֆյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

**Հրավիրված էին՝** Լ.Մարկոսյան

Նիստն անցկացվել է հեռավար:

**Օրակարգի նախագծում երեք հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 61-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 27-Ն, թիվ 28-Ն և թիվ 29-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավետիսյան/

**3.Այլ հարցեր**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 61-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «2019 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 61-Ն որոշմամբ հաստատված «Հավելված» 1-ի Մաս 3-ում 3.1.-րդ բաժնի 3.1.1.-րդ գլխի 15-րդ և 16-րդ կետերի «Թողարկման (հրապարակման) ժամկետը» սյունակում «սեպտեմբեր» բառը փոխարինել «նոյեմբեր» բառով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 27-Ն, թիվ 28-Ն և թիվ 29-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավետիսյան/

**Որոշեցին՝**

հաստատել որոշումը ըստ ներկայացված նախագծի

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ